ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտ ամսին տեղի ունեցան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական, ֆիզիկա-մաթեմատիկական, կենսաբանական և տեխնիկական գիտությունների բաժանմունքների տարեկան ժողովները, որտեղ քննարկվեցին համապատասխան բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարներ Ա. Ռ. Հովհաննիսյանի, Ա. Լ. Շահինյանի, Բ. Ա. Ֆանարջյանի և Հ. Գ. Մաղաքյանի զեկուցումները բաժանմունքների հիմնարկների 1957 թ. գործունեության և 1959—1965 թվականների ընթացքում նրանց զարգացման հեռանկարների մասին։

Այնուհետև, մարտի 22-ին գումարվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ, գիտա-հետազոտական հիմնարկների ղեկավարներ, գիտա-տեխնիկական աշխատողներ։ Ակադեմիայի 1957 թ. գիտա-հետազոտական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս քարտուղար Հ. Խ. Բունիաթյանը։ Նա նշեց, որ Կոմունիստական պարտիայի և Սովետական Կառավարության հոգատարության շնորհիվ վերջին տարում սովետական գիտությունը հասել է մեծ նվաճումների։ Զգալի աշխատանք է կատարվել նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնարկներում։ Հաշվետու ժամանակաշրջանում գիտական աշխատողների ուշադրության կենտրոնում են գտնվել մի շարք կարևոր պրոբլեմներ, որոնք ունեն ինչպես գիտական, այնպես էլ ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն։

Արդեպավոր ուսումնասիրություններ են կատարել մաթեմատիկոսները, մեխանիկները, ֆիզիկոսները և աստրոֆիզիկոսները։ Բյուրականի աստղադիտարանը ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի ղեկավարությամբ շարունակել է խորացված հետազոտություններ կատարել նախորդ տարիներին սկսած ոչ ստացիոնար աստղերի և այլ պրոբլեմների ուսումնասիրման ուղղությամբ։ Խոշոր աշխատանքներ են կատարված աստղադիտարանում նոր, մեծ ռադիոդիտակ սարքավորելու համար։

Զգալի արդյունքներ են տվել ֆունկցիաների ընդհանուր տեսության և մոտավորությունների տեսության պրոբլեմների ուսումնասիրությունը Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում։ 1957 թ. կազմակերպված Հաշվողական կենտրոնում գործող մեքենայի միջոցով կատարվել են գիտական և պրակտիկ խոշոր նշանակություն ունեցող հաշվումներ։ Տեխնիկական և կենսաբանական գիտությունների բաժանմունքները ևս ունեցել են գիտական կարևոր նվաճումներ։ Զեկուցման մեջ առանձնապես հիշատակվեցին Երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխատանքները բազմամետաղային հանքերի ուսումնասիրության, ինչպես նաև մի շարք հազվագյուտ մետաղների հայտնաբերման գծով։ Նշվեց էլեկտրատեխնիկայի լաբորատորիայի գրական աշխատանքը բարձրադիր վայրերում պսակային երևույթի հետևանքով առաջացող էլեկտրաէներգիայի կորուստների մեծությունը հաշվելու և այն կանխելու ուղղությամբ։ Հաջողություններ է ձեռք բերել նորը օրգանական քիմիայի ինստիտուտը։ Այստեղ ստեղծվել են մի քանի նոր դեղորայքներ (դիտիլին, գանգլերոն), որոնք լայն կիրառում են գտել բժշկության ասպարեզում։

Ինչպես զեկուցողը, այնպես էլ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ա. Բ. Կարինյանը, ԳԱ թղթակից-անդամ Ա. Լ. Մելիքսետ-Բեկը իրենց ելույթներում նշեցին, որ հասարակական գիտությունների բաժանմունքը զգալիորեն ընդարձակել է իր գործունեությունը։ 1957 թ. ակադեմիայում մշակված 67 պրոբլեմներից 28-ը և 331 թեմաներից 137-ը կատարվել են հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում։ Որոշ փոփոխություններ են տեղի ունեցել առանձին գիտական հիմնարկների ներքին կառուցված-

քում։ Պատմության ինստիտուտում ստեղծվել է Արևելագիտության և Աղբյուրների հրատարակման, Գրականության ինստիտուտում՝ Տեքստոլոգիայի, Լեզվի ինստիտուտում՝ Քարտարանի նոր սեկտորներ։ ԳԱ նախագահության որոշմամբ 1958 թ. հունվարից ստեղծվել է Արևելագիտության ինքնուրույն սեկտոր և Արվեստների ինստիտուտ։ ԳԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի աշխատանքների բարելավման շնորհիվ ավելի հաջող է ընթանում գիտական աշխատությունների տպագրման գործը։ 1957 թ. ընթացքում միայն հասարակական գիտությունների գծով հրապարակվել և տպագրության է հանձնվել 65 անուն աշխատանք 1172 մամուլ ծավալով։

Հաշվետու տարում Պատմության ինստիտուտի գիտական կոլեկտիվի ուշադրությունը կենտրոնում են եղել հայ ժողովրդի պատմության բազմաթիվ պրոբլեմատիկ խնդիրները, ինչպես նաև ազգագրության և արևելագիտության հարցերը։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 40-ամյակի կապակցությամբ ինստիտուտը լույս է ընծայել այդ թեմային նվիրված մի շարք աշխատություններ։ Ինստիտուտի աշխատանքներում կարևոր տեղ է գրավել բանվոր դասակարգի և գյուղացիության նախառևոլյուցիոն շրջանի պայքարի և սովետական շրջանի զարգացման հարցերը, շարունակվել է ֆեոդալական հարաբերությունների ծագման և միջնադարյան Հայաստանում ագրարային հարաբերությունների հարցերի մշակումը։ Ավարտվել են հին Հայաստանի հասարակարգային առանձնահատկություններին և 14—15 դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններին նվիրված հետազոտությունները։ Շարունակվել են աշխատանքները հայկական «Կանոնագրքի» և «Հիշատակարանների» հրատարակության նախապատրաստման ուղղությամբ։ Նեղիթի, ինչպես նաև ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանները դարձյալ եղել են ուսումնասիրության առարկա, մշակվել են Ուրարտական պետության պատմության հարցերը, ավարտված է Գառնի ամրոցին վերաբերող երկու թեմա, հարուստ նյութեր են տվել Կարմիր բլուրի, Գառնիի և Արինբերդի հնագիտական պեղումները՝ կատարված ինստիտուտի կողմից։ Ինստիտուտի թեմատիկայում նշանակալից տեղ են գրավել հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրման հարցերը։

Զեկուցողը կանգ առավ նաև Հայկ. ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի գործունեության վրա։ Այստեղ շարունակվել են աշխատանքները սոցիալիզմի քաղաքատնտեսության և ժողովրդական տնտեսության պատմության, արդյունաբերության ու գյուղատնտեսության էկոնոմիկայի պրոբլեմների մշակման ուղղությամբ։ Հայկական ՍՍՌ-ում ինքնուրույն տնտեսական վարչական շրջանի ստեղծման կապակցությամբ, արդյունաբերության կազմակերպման և ղեկավարման նոր պայմանների տեսանկյունով, ինստիտուտը մշակել է «Հայկական ՍՍՌ մեքենաշինական արդյունաբերության մասնագիտացումն ու կազմակերպումը» թեման։ Այդ թեմայի մշակման արդյունքները քննարկվել են Հայկական, Վրացական և Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների տնտեսագիտության ինստիտուտների ռեգիոնալ խորհրդակցությունում և ներկայացվել Հայկական ՍՍՌ Պետական Պլանային հանձնաժողովին։ Ելնելով գյուղատնտեսության և մասնավորապես անասնաբուծության հետագա էլ ավելի արագ զարգացման վերաբերյալ պարտիայի և կառավարության նոր որոշումներից, ինստիտուտը վերամշակել է «Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության տեղաբաշխումն ու մասնագիտացումը» թեման։ Ավարտված է նաև լեռնային շրջաններում գյուղատնտեսության տեղաբաշխմանը և մասնագիտացմանը, Հայկական ՍՍՌ կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի և գնագոյացման հարցերին նվիրված թեմաների մշակումը։ 1957 թ. Տնտեսագիտության ինստիտուտը հրատարակել է մի շարք աշխատություններ։

Ընդհանուր ժողովում նշվեց, որ հաշվետու տարում Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի կոլեկտիվի ուշադրությունը կենտրոնացված է եղել հայ գրականության դիտական պատմության ստեղծման խնդրի վրա։ Մշակվել է հայ նոր գրականության պատմությունը, կազմվել և լույս է ընծայվել մեծածավալ «Սովետահայ գրականության տարեգրությունը», որն արտացոլում է գրականության բնագավառում ձեռք բերված նվաճումները։ Զգալի աշխատանք է կատարված հայ ժուռնալիստիկայի պատմության և հայ-ռուսական կուլտուրական ու գրական կապերի ուսումնասիրման բնագավառում։ Աշխուժացել է նաև հայկական միջնադարյան դրականության ուսումնասիրման գործը։ Ավարտվել են միջնադարյան հեղինակներ Խաչատուր Կեչառեցու, Հովհաննես Երզնկացու, Ներսես Շնորհալու ստեղծագործություններին նվիրված մենագրությունները, կազմված է 17—18 դարերի հայ աշուղների երգերի ժողովածուն, շարունակվել են հայկական հեքիաթների, առասպելների, առակների, ավանդությունների, ինչպես նաև հայ դրականության կլասիկների հրատարակության նախապատրաստական աշխատանքները։ Հրատարակման են պատրաստվել Մ. Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի նոր հրա-

տարակության 1-ին և Խ. Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի 10-րդ հատորները, ինչպես նաև Խ. Աբովյանի ստեղծագործության ու կյանքի տարեգրությունը։

Լեզվի ինստիտուտում արդյունավետ աշխատանք է ծավալվել հայկական բառարանագիտության բնագավառում։ Ինստիտուտը լուծել է իր առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկը՝ ավարտված է ռուս-հայերեն բառահատոր բառարանը, որի 4-րդ (վերջին) հատորը հանձնվել է տպագրության։ Կարևոր նշանակություն ունի հայոց լեզվի բարտարանի կազմակերպումը։

Փիլիսոփայության սեկտորում մշակվել են մարքս-լենինյան փիլիսոփայության, ինչպես նաև հայ փիլիսոփայության պատմության մի շարք հարցեր։ Ավարտվել են «Հայ փիլիսոփայական մտքի պատմությունը» և «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» աշխատությունները, ուսումնասիրվել են միջնադարյան հայ փիլիսոփաներ Հովհաննես Որոտնեցու և Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական հայացքները։ Լույս են տեսել «18-րդ դարի 2-րդ կեսի հայ առաջավոր փիլիսոփայական մտքի պատմությունից», «Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները», «Իմացության մեջ աբստրակցիայի դերի մասին» և այլ աշխատություններ։

Զեկուցողը նշեց նաև Արվեստի պատմության և տեսության սեկտորի (այժմ՝ Արվեստների ինստիտուտ), Պատմական թանգարանի, Գրականության և արվեստի թանգարանի բեղմնավոր գործունեությունը։ Նա ցույց տվեց այն սերտ կապը, որ գոյություն ունի Հայկական ՍՍՌ ԳԱ գիտական հիմնարկների և Սովետական Միության, ինչպես նաև արտասահմանյան բազմաթիվ երկրների գիտական հիմնարկների միջև։ ԳԱ Կենտրոնական գրադարանը կապ ունի աշխարհի 37 երկրների հետ։ Անցած տարի արտասահմանյան տարբեր երկրներում կայացած գիտական կոնֆերանսներում զեկուցումներով հանդես են եկել Հայկական ՍՍՌ ԳԱ մի շարք ակադեմիկոսներ։ Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը զեկուցումներով ու դասախոսություններով հանդես է եկել գազային դինամիկայի գծով Քեմբրիջում կայացած միջազգային սիմպոզիումում, ԱՄՆ-ում՝ Պալոմարի և Լիկի խոշորագույն աստղադիտարաններում, Ավստրիայում, որի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամն է հանդիսանում։ Իսկ 1957 թվականի վերջերին ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը ընտրվեց նաև Բեռլինի ակադեմիայի թղթակից-անդամ։ Որպես լուրջ երևույթ նշվեց Երևանում տեղի ունեցած Անդրկովկասյան ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների միացյալ սեսիան՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակին։ Սեսիայի աշխատանքներին մասնակցեցին և զեկուցումներով հանդես եկան Մոսկվայի, Լենինգրադի, Բաքվի, Թբիլիսիի, Երևանի, Սուխումիի, Մախաչկալայի, Նալչիկի գիտական աշխատողներ։ Մեծ ակտիվությամբ և գիտական բարձր մակարդակով անցան Լենինական և Կիրովական քաղաքներում կազմակերպված ԳԱ արտագնաց սեսիաները, որտեղ զեկուցումներով հանդես եկան ակադեմիկոսներ Վ. Հ. Համբարձումյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Ա. Բ. Կարինյանը, Ս. Ն. Մերգելյանը, Ա. Լ. Շահինյանը, Մ. Վ. Կասյանը, Ի. Գ. Մազաքյանը, Ս. Ս. Մկրտչյանը, Բ. Ա. Ֆանարջյանը և ուրիշներ։

1959—1965 թվականներին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտական հետազոտությունների զարգացման հեռանկարների հարցի շուրջը զեկուցումով հանդես եկավ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ուրվագծեց երկրի ժողովրդական տնտեսության վերելքին զուգընթաց ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի համար բացվող մեծ հեռանկարները։ Զգալի չափով ընդարձակվելու է գիտա-հետազոտական հիմնարկների ցանցը, որը նպաստելու է ինչպես գիտական մտքի զարգացմանը, այնպես էլ ժողովրդական տնտեսության համար շատ կարևոր հարցերի լուծմանը։ Ստեղծվելու են ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, մետաղների, ռադիոբիոլոգիայի, բիոքիմիայի, կարդիոլոգիայի, հնագիտության և ազգագրության, արևելագիտության, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտներ։ Մեծ ուշադրություն է դարձվելու քիմիական և գունավոր մետաղների արդյունաբերության, ճշգրիտ գործիքաշինության զարգացմանը։ Զգալիորեն ընդարձակվելու են հաստիքները։ Նախատեսվում է 1958 թվականին առկա 1938 միավորից հաստիքների թիվը յոթնամյակի վերջում հասցնել 5079 միավորի։ Մեծ հատկացումներ են արվելու բնակարանային և վարչական շենքերի շինարարության, նոր սարքավորումներ ձեռք բերելուն։ Ընդգծվեց նաև գիտական կադրերի պատրաստման, երիտասարդ կադրերի աճի կարևորությունը։ Ընդհանուր ժողովը լսեց նաև ԳԱ ակադեմիկոս Ն. Խ. Հարությունյանի զեկուցումը «Մողրի տեսության մի քանի հարցերի մասին» թեմայով և դրանով ավարտեց իր աշխատանքները։

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ

1957 թվականի դեկտեմբերի 26-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հասարակական գիտությունների բաժանմունքի բաց նիստ՝ նվիրված Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանցի ծննդյան 100-ամյակին։

Մեծանուն հայագետի գրական-գիտական վաստակը հիմնականում ընթացել է երեք ուղղությամբ բանասիրության, քերականագիտության և բառարանագրության։ Նրա գիտական գործունեության այս երեք բնագավառներին էին նվիրված հիշյալ նիստում կարդացված զեկուցումները։

«Ստ. Մալխասյանցի գիտական գործունեությունը» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Ս. Ղարիբյանը, որը հանգամանորեն նշեց հանգուցյալ ակադեմիկոսի անցած գիտական ուղին և կանգ առավ հատկապես նրա բանասիրական աշխատությունների վրա։

Փայլուն ու հիմնավոր իմանալով գրաբարը, և ընդհանրապես հայերենն իր բոլոր շրջաններով, Ստ. Մալխասյանցը աշխատակցել է հայ պատմիչներ Ստեփանոս Տարոնեցու, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Սեբեոսի գործերի հրատարակմանը, տարբեր ձեռագրերը համեմատելով իրար հետ և տալով մանրակրկիտ ծանոթություններ։ Նրա շնորհիվ հայ հասարակությանը մատչելի են դարձել Մովսես Խորենացու և Փավստոս Բյուզանդի հայոց պատմությունները՝ աշխարհաբար թարգմանությամբ։ Բացի այս գրաբար հրատարակություններից նա ունի արժեքավոր դիտական ուսումնասիրություններ հայ պատմիչների մասին, ինչպես, օրինակ, «Ուսումնասիրություն Փավստոս Բյուզանդացու պատմության», «Սեբեոսի պատմությունը և Մովսես Խորենացին», «Մ. Խորենացու առեղծվածի շուրջը»։ Հատկապես մեծագույն մեծ ծառայություն էր հայ պատմագիտությանը, որով Մալխասյանցը ի հակադրություն Խորենացուն ավելի ուշ շրջանի պատմիչ համարողների, գիտականորեն հիմնավորեց և ապացուցեց նրա՝ հինգերորդ դարի գործիչ լինելը։

«Ստ. Մալխասյանցը լեզվաբան» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Հր. Պետրոսյանը, որը բավականաչափ մանրամասն ներկայացրեց մեծ հայագետի լեզվագիտական հարուստ ժառանգությունը։ Նա նշեց Ստ. Մալխասյանցի մեծարժեք գիտական ուսումնասիրությունները, որոնք շոշափում են հայերենի տեսական տարբեր հարցեր։ Գիտնականին զբաղեցրել են հայերենի ձևաբանությունը, շարահյուսությունը, բառային կազմը, ուղղագրությունը։ Նրա աշխատություններից ուշագրավ են հատկապես «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախադիրները» (1891) և «Գրաբարի համաձայնությունը» (1892)։ Միմյանց լրացնող այս երկու աշխատությունները երկար ժամանակ հանդիսացել են գրաբարի ձևաբանության և շարահյուսության լավագույն ձեռնարկներ։ Երկրորդը գրաբարի շարահյուսության միակ դասընթացն է աշխարհաբար լեզվով։

Բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Պետրոսյանը իր «Ստ. Մալխասյանցը բառագետ» զեկուցման մեջ նշեց հմուտ բառարանագրի կատարած հսկայական աշխատանքը հայ բառարանագրության պատմության մեջ։

Մալխասյանը մասնակցել է ռուս-հայերեն իրավաբանական բառարանի, երկաթուղային տերմինների ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարաններ կազմելու աշխատանքներին։ Սակայն նրա բառարանագրական և ընդհանրապես գիտական գործունեության փայլուն գագաթը Հայերեն բացատրական քառահատոր բառարանն է։

Ստ. Մալխասյանցը 70 տարի քրտնաջան աշխատեց հայ ժողովրդի համար՝ թողնելով հայագիտության տարբեր բնագավառներին վերաբերող շուրջ 200 անուն աշխատություն և ուսումնասիրություն։

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆՈՐ ԴԻՍԵՐՏԱՑԻԱՆԵՐ

1956—57 թթ. ընթացքում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքում, Երևանի Պետական համալսարանում հասարակական գիտությունների գծով պաշտպանված դոկտորական և թեկնածուական դիսերտացիաներ:

ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԴԻՍԵՐՏԱՑԻԱՆԵՐ

Հովհաննիսյան Ա. Գ.—«Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (պատմական գիտությունների գծով)։

Պարտիզոնի Վ. Զ.— «Մուրացանի ստեղծագործությունը» (բանասիրական գիտությունների գծով)։

ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԴԻՍԵՐՏԱՑԻԱՆԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Ամիրյան Ս. Ս.— «Մարքսիստական պատմագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ»։

Այվազյան Կ. Հ.— «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պայքարը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման համար գյուղատնտեսության կոլեկտիվացման շրջանում»։

Ասատվածատուրով Ա. Ա. — «ՍՄԿՊ ղեկավարները օսական սոցիալիստական ազգի ձևավորման և զարգացման մեջ»։

Բարբիկյան Հ. Մ. — «Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուրները»։

Բարխուդարյան Ս. Գ.— «Միջնադարյան հայ Հարտարապետները և քարագործ վարպետները»։

Խաչատրյան Ա. Բ.— «Մյասնիկյանի ռևոլյուցիոն գործունեությունը Արևմտյան ռազմաճակատում և Բելոռուսիայում 1917—1919 թթ.»։

Խոնդկարյան Հ. Ա. — «Սոցիալիստական ինդուստրացման նշանակությունը ՍՍՌՄ-ի ազգային ռեսպուբլիկաների տնտեսական հետամնացության լիկվիդացման գործում (Հայկական ՍՍՌ-ի օրինակով)»։

Խոնդկարյան Մ. Ա. — «Ագրարային հարաբերությունները Հայաստանում 1907—1914 թթ.»։

Խուրշուդյան Լ. Ա.— «Ս. Գ. Շահումյանը Կոմունիստական պարտիայի և սովետական պետության ականավոր գործիչ (1917—1918)»։

Կարապետյան Հ. Ն.— «Հայաստանի կոմերիտմիության ծնունդը»։

Հակոբյան Մ. Մ. — «Հայաստանի Կոմունիստական պարտիայի պայքարը Լենինյան կոոպերատիվ պլանի իրականացման համար»։

Մռավյան Յու. Վ. — «Ազգային հարցի մարքսիստական-լենինյան դրվածքի պաշտպանությունն ու հիմնավորումը Ս. Գ. Շահումյանի կողմից»։

Մուշեղյան Խ. Ա.— «Դվինի դրամական շրջանառության և առևտրական կապերի պատմությունից»։

Մուրադյան Գ. Ա. — «Բանվորական շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.»։

Յուզբաշյան Կ. Ն. — «Բյուզանդիան խաչակրաց 4-րդ արշավանքի նախօրյակին (1204 թ. պարտության պատճառների հարցի շուրջը)»։

Տիրացյան Գ. Ա. — «Հայաստանի նյութական կուլտուրան մ.թ. I դարում ըստ Գառնիի միջնաբերդի և բաղանիքի տվյալների»։

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Աբեղյան Ս. Ս. — «Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները»։

Վարդանով Ռ. Գ. — «Կոմունիզմի մասին Լենինյան ուսմունքի զարգացումը ՍՄԿՊ պլենումների որոշումների մեջ 1953—1955 թթ.»։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Ավետիսյան Վ. Ա.— «Հայերենի հոլովական կառուցվածքը»։

Բեղիրյան Պ. Ս.— «Բառիմաստի փոփոխությունները հայերենում»։

Դալստյան Ս. Ա. — «Միքայել Նալբանդյանի լեզուն (ըստ հրապարակախոսական նյութերի)»։

Զարբհյան Ս. Կ.— «Բայի անցյալ ժամանակների նշանակությունը և կիրառությունը ժամանակակից հայերեն և գերմաներեն լեզուներում»։

Կարագուլյան Տ. Ա. — «Գրաբարի խոնարհման սիստեմը (համեմատական ուսումնասիրություն)»։

Հախումյան Ս. Տ. — «Ն. Գ. Պոմյալովսկու «Բուրսայի ակնարկներ»-ի լեքսիկան»։

Պառնասյան Ն. Ա.— «Արդի հայերենի բարդ ստորագասական նախադասությունը»։

Ջաղացպանյան Դ. Կ. — «Հայերի համար ռուսաց լեզվի քերականական առաջին գործերի և Խ. Աբովյանի «Ռուս տեսական և գործնա-

կան նոր քերականության» լեզվաբանական հիմքերը»։

Ջունարյան Թ. Գ. — «Բայի ուսումնասիրության մեթոդիկան»։

Քյուրչյան Ա. Ն.— «Արդի հայերենի մակբայները»։

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Ղազանչյան Վ. Ի.— «Սոցիալիստական արդյունաբերության հիմնական ֆոնդերի ամորտիզացիան»։

Կարապյան Կ. Պ. — «Սպառողական կոոպերացիայի ծագումն ու զարգացումը»։

Քոթանյան Մ. Խ. — «Սպառման ապրանքների արտադրությունը Հայկական ՍՍՌ-ում հետպատերազմյան շրջանում»։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Մազմանյան Ա. Ա. — «Հասարակական սեփականության նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակությունը դպրոցում»։

Մելքումյան Մ. Ս.— «Հետպատերազմյան շրջանի սովետահայ մանկական գրականության հանրակրթական դաստիարակչական նշանակությունը»։

Պարսամյան Գ. Ե. — «Ֆիզիկական դաստիարակությունը հայկական դպրոցում 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին»։

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Մուսախանյան Վ. Ա. — «Հայկական ՍՍՌ-ի պետական իշխանության օրգանները սոցիալիստական պետության զարգացման առաջին փուլում»։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 1957 ԹՎԱԿԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Հասարակական գիտություններ)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Անասյան Հ. — Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին։ Խմբագիր Կ. Ղաֆադարյան, հայերեն և ռուսերեն լեզուներով, ընագրերի թարգմանությունը գրաբարից Ս. Ս. Արևշատյանի, 147 էջ, գինը 5 ռ. 65 կ.։

Առաքելյան Բ. Ն. — Գառնի. II, Գառնիի հնագիտական արշավախմբի 1951—1955 թթ. աշխատանքների արդյունքները (անտիկ ժամանակաշրջան)։ Խմբագիր Հ. Մարտիրոսյան, ռուսերեն լեզվով, 115 էջ, գինը 5 ռ. 60 կ.։

Ավդալ Ամինե — Անդրկովկասյան քրդերի կենցաղը։ Խմբագիր Գ. Վարդումյան, հայերեն լեզվով, 302 էջ, գինը 8 ռ. 15 կ.։

Եզանյան Հ. Մ.— Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և ազգային-ազատագրական շարժումները Իրանում (1917—1921)։ Խմբագիր Բ. Զուդասզյան, հայերեն լեզվով, 111 էջ, գինը 1 ռ. 25 կ.։

Էլշիբեկյան Հ. Մ.— Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում։ Խմբագիր Ղ. Դալլաքյան, ռուսերեն լեզվով, 218 էջ, գինը 4 ռ. 50 կ.։

Թրյան Հ. Կ. — Նավթարդյունաբերության տեղաբաշխումը և անգլո-ամերիկյան իմպերիալիստների հակասությունները Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում։ Խմբագիր Ա. Եղիազարյան, հայերեն լեզվով, 291 էջ, գինը 10 ռ. 60 կ.։

Կոզմոյան Կ. Ս. — Լենինական։ Խմբագիր Գ. Սահակյան, հայերեն լեզվով, 179 էջ, գինը 3 ռ. 50 կ.։

Հակոբյան Ս. Ե. — Հայ գյուղացիության պատմություն (վաղ ֆեոդալիզմի դարաշրջան)։ Խմբագիրներ Վ. Հակոբյան, Վ. Հարությունյան, հայերեն լեզվով, 543 էջ, գինը 20 ռ. 25 կ.։

Հովհաննիսյան Աշոտ — Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության։ Գիրք առաջին։ Խմբագիր Լ. Խաչիկյան, հայերեն լեզվով, 525 էջ, գինը 19 ռ.։

Հայկական ՍՍՌ-ի պատմություն, ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար։ Երրորդ մաս, հեղինակների կոլեկտիվ։ Խմբագիրներ Ա. Հակոբյան, Ա. Մնացականյան, հայերեն լեզվով, 370 էջ, գինը 5 ռ. 65 կ.։

Մեծ Հոկտեմբերի դրոշի ներքո (հոդվածների ժողովածու)։ Հեղինակների կոլեկտիվ։ Խմբագիրներ Ա. Հակոբյան, Ե. Խալեյան, հայերեն լեզվով, 318 էջ, գինը 5 ռ. 90 կ.։

Ղաֆադարյան Կ. Գ. — Սանահնի վանքը և նրա արձանագրությունները։ Խմբագիր Բ. Առաքելյան, հայերեն լեզվով, 209 էջ, գինը 13 ռ. 50 կ.։

Յուզբաշյան Կ. Ն. — Դասակարգային պայքարը Բյուզանդիայում 1180—1204 թթ. և խաչա-

կրաց չորրորդ արշավանքը։ Խմբագիր Գ. Սարգսյան, ռուսերեն լեզվով, 71 էջ, գինը 1 ռ.։

Պատմութիւն Ֆարման Մանկանն *(միջնադարյան պոեմ). հրատարակության պատրաստեց Շուշանիկ Նազարյան։ Խմբագիր Ա. Մնացականյան, հայերեն լեզվով, 194 էջ, գինը 6 ռ.։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եղիշէի վասն Վարդանայ և հայոց պատերազմին — *Ի լոյս ածեալ բազդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեանի։ Խմբագիր Լ. Ս. Խաչիկյան, գրաբար, 222 էջ, գինը 16 ռ. 50 կ.։*

«Հյուսիսափայլի» պոեզիան. *Ժողովածուն կազմեց, կոմենտարները և առաջաբանը գրեց Մերի Սաղյանը։ Խմբագիր Ն. Մուրադյան, հայերեն լեզվով, 451 էջ, գինը 8 ռ. 15 կ.։*

Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից. *Հեղինակների կոլեկտիվ։ Խմբագիր Կ. Մելիք-Օհանջանյան, հայերեն լեզվով, 284 էջ, գինը 7 ռ. 25 կ.։*

Սովետահայ դրամատուրգիայի տարեգրություն, *հեղինակների կոլեկտիվ։ Խմբագիրներ Է. Թոփչյան, Ս. Աղաբաբյան, հայերեն լեզվով, 753 էջ, գինը 21 ռ. 35 կ.։*

«Եղիշե Չարենցի ստեղծագործությունը», *հոդվածների ժողովածու, հեղինակների կոլեկտիվ։ Խմբագիր Ս. Աղաբաբյան, հայերեն լեզվով, 268 էջ, գինը 6 ռ. 35 կ.։*

Մկրտչյան Մ. Ս. — *Նաղաշ Հովնաթան։ Խմբագիր Խ. Սարգսյան, հայերեն լեզվով, 181 էջ, գինը 2 ռ. 35 կ.։*

Նազինյան Ա. Մ. — *Սովետահայ ժողովրդական բանահյուսությունը։ Խմբագիր Գր. Գրիգորյան, հայերեն լեզվով, 132 էջ, գինը 3 ռ. 80 կ.։*

Սարինյան Ս. — *Բաֆֆի։ Խմբագիր Ս. Աղաբաբյան, հայերեն լեզվով, 369 էջ, գինը 8 ռ.։*

Չարենց Եղիշե — *Գրականության մասին։ Խմբագիր Հ. Գրիգորյան, հայերեն լեզվով, 217 էջ, գինը 3 ռ. 95 կ.։*

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անանյան Հ. — *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հատոր 3-րդ։ Խմբագիր Է. Աղայան, հայերեն լեզվով, 1011 էջ, գինը 34 ռ.։*

Առամելյան Վարազ — *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները։ Խմբագիր Ա. Մուրվալյան, հայերեն լեզվով, 299 էջ, գինը 10 ռ. 75 կ.։*

Գեորգյան Մ. Ա., Համբարձումյան Հ. Ա., Տեր-Մինասյան Ե. Դ., Փորեյան Վ. Ա. — *Ռուս-հայերեն բառարան։ Երրորդ հատոր, գլխավոր խմբագիր Ա. Ս. Ղարիբյան, ռուսերեն-հայերեն, 799 էջ, գինը 25 ռ.։*

Կոստանյան Հ. — *Ակնարկներ վերջին տասնամյակի սովետահայ արձակի լեզվի և ոճի մասին։ Խմբագիր Ա. Ղարիբյան, հայերեն լեզվով, 223 էջ, գինը 6 ռ. 30 կ.։*

Զարիանցյան Գր. — *Պաամա-լեզվաբանական աշխատություններ, Հայերի նախնական պատմության շուրջը, Հին Փոքր Ասիա։ Խմբագիր Հ. Կոստանյան, ռուսերեն լեզվով, 471 էջ, գինը 16 ռ. 50 կ.։*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Մ. Ա. — *Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը XIX դարում։ Խմբագիր Զ. Բաշինջաղյան, ռուսերեն լեզվով, 560 էջ, գինը 20 ռ. 40 կ.։*

Արդյունաբերական ձեռնարկության էկոնոմիկան, *հոդվածների ժողովածու։ Խմբագիրներ Մ. Ադոնց, Ա. Ջրաբաշյան, հայերեն լեզվով, 294 էջ, գինը 6 ռ.։*

Եգանով Գ. Լ. — *Լայնորեն արմատավորել կոլեկտիվային ձուլումը մեքենաշինական ձեռնարկություններում։ Խմբագիր Ա. Մարջանյան, հայերեն լեզվով, 39 էջ, գինը 40 կ.։*

Խուրշուդյան Կ. Ն. — *Երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտի միջև փոխադրումների բաշխման սկզբունքները Հայկական ՍՍՌ պայմաններում։ Խմբագիր Տ. Խաչատուրով, ռուսերեն լեզվով, 131 էջ, գինը 2 ռ.։*

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Լ. Հ. — *Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգային հարցը։ Խմբագիր Ս. Թովմասյան, հայերեն լեզվով, 42 էջ, գինը 45 կ.։*

Արեշատյան Ս. Ա. — *Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները։ Խմբագիր Լ. Խաչիկյան, ռուսերեն լեզվով, 181 էջ, գինը 7 ռ. 25 կ.։*

Գեորգյան Հ. Ա. — *Իմացության մեջ աբստրակցիայի դերի մասին։ Խմբագիր Լ. Աբրահամյան, ռուսերեն լեզվով, 169 էջ, գինը 6 ռ.։*

Գրիգորյան Գ. Հ. — *Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից (18-րդ դարի երկրորդ կես)։ Խմբագիր Ս. Արեշատյան, հայերեն լեզվով, 207 էջ, գինը 7 ռ. 25 կ.։*

Դանիելյան Մ. — *Մարքսիզմ-լենինիզմը մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրության մասին։ Խմբագիր Ս. Թովմասյան, ռուսերեն լեզվով, 211 էջ, գինը 4 ռ. 65 կ.։*

Ոսկանյան Ա. Մ. — Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան և մեր երկրի բնության սոցիալիստական վերափոխումը։ Խմբագիր Հ. Գևորգյան, հայերեն լեզվով, 81 էջ, գինը 2 ռ.։

ԱՐՎԵՍՏ

Զարյան Ռուբեն — *Սիրանույշ։ Խմբագիր Լ. Հախվերդյան, հայերեն լեզվով, 347 էջ, գինը 8 ռ.։*

Հարությունյան Բարկեն — *Ռուսական դրամատուրգիան սովետահայ բեմում։ Խմբագիր Պ. Մարկով, ռուսերեն լեզվով, 177 էջ, գինը 5 ռ. 40 կ.։*

Ղալփախչյան Հ. Խ. — *Հայ-ռուսական կուլտուրական հարաբերությունները և նրանց արտացոլումը ճարտարապետության մեջ։ Խմբագիր Մ. Մազմանյան, ռուսերեն լեզվով, 125 էջ. գինը 2 ռ. 10 կ.։*

Շելկովնիկով Բ. Ա. — *Անիում հայտնաբերված ջնարակած խեցեղենը։ Խմբագիր Ռ. Դրամփյան, ռուսերեն լեզվով, 102 էջ, գինը 6 ռ. 30 կ.։*

Սարգսյան Մինաս — *Գևորգ Բաշինջաղյան. կյանքը և գործունեությունը։ Խմբագիր Ե. Հովհաննիսյան, հայերեն լեզվով, 179 էջ, գինը 7 ռ. 50 կ.։*

ԱՅԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կովկասի և Անդրկովկասի ուսումնասիրության IV գեոմորֆոլոգիական կոնֆերանսի աշխատությունները, *հոդվածների ժողովածու։ Խմբագրել են Ն. Վ. Դումիտրաշկոն, Հ. Գ. Մաղաբյանը, Հ. Ս. Ստեփանյանը, ռուսերեն լեզվով, 216 էջ, գինը 9 ռ. 25 կ.։*

Ստեփանյան Հ. Ս. — *Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695—1955)։ Համառոտ ակնարկ։ Խմբագիր Ս. Երեմյան, հայերեն լեզվով, 158 էջ, գինը 5 ռ.։*

Արմֆանի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությունների բիբլիոգրաֆիա *(1936—1956)։ Կազմողներ՝ Վլասյան Ե. Ս., Մանասերյան Ա. Ս.։ Խմբագիր Վ. Ն. Կարմենյան, ռուսերեն լեզվով, 536 էջ, գինը 10 ռ.։*

Օրբելի Հովսեփ Արգարի — *(կենսագրություն և բիբլիոգրաֆիա)։ Խմբագիրներ Բ. Առաքելյան, Վ. Կարմենյան, ռուսերեն լեզվով, 76 էջ, գինը 1 ռ. 30 կ.։*